ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» հոկտեմբեր 2019 թվականի N 15/12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՖՈՆԴԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱԼԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված 9-րդ մասի 7-րդ կետի և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2019թ. մարտի 29-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի անդամների և աշխատակիցների պարգևատրման և խրախուսման» կարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել երկրորդ եռամսյակի համար ՀՀ հաշվեքննիչ պալատի (այսուհետև՝ Պալատ) պարգևատրման ֆոնդի մեծությունը 36 860 հազ. (երեսունվեց միլիոն ութ հարյուր վաթսուն հազար) դրամի չափով:

2. Սահմանել «Պալատի անդամների պարգևատրման» ենթաֆոնդը, պարգևատրման տոկոսային հարաբերակցությունը, պարգևատրման չափը, «Պալատի Գլխավոր քարտուղարի և կառուցվածքային ստորաբաժանման մեջ չընդգրկված աշխատակիցների պարգևատրման» և «Պալատի կառուցվածքային ստորաբաժանումների պարգևատրման» ենթաֆոնդերի չափը համաձայն հավելվածի:

3.Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ն.Սակակյանին՝

-սահմանված կարգով ապահովել պարգևատրման գումարների վճարումը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ